«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

13 Հոկտեմբերի 2022, N 2 - 2

2021-2022 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով և քննարկելով **«2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. կիսամյակի ընթացքում ռեկտորատը, ուսումնական բաժինը, դեկանատները և ամբիոնները հետևողական աշխատանք են կատարել քննաշրջանը կազմակերպված անցկացնելու ուղղությամբ: Կիսամյակի ընթացքում համահամալսարանական հիմնական առարկաների գծով կազմակերպվել և անցկացվել են գիտելիքների համակարգչային և բանավոր ստուգումներ: Ստուգումները կազմակերպվել են գործող կարգի պահանջներին համապատասխան: Քննագրաֆիկների խախտումներ և ձախողումներ չեն արձանագրվել:

Ռեկտորատը, դեկանատները և ամբիոնները մեծ ուշադրություն են դարձրել ոչ միայն գիտելիքների ստուգման գործընթացի կազմակերպման և անցկացման, այլ նաև կիսամյակի ընթացքում ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման հարցերին:

2021-2022 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանին (առանց 1-ին և 2-րդ վերահանձնումների) մասնակցել են.

1. առկա ուսուցման բակալավրիատի 1-3-րդ կուրսերի 2453 ուսանող. նրանցից դրական գնահատականներ են ստացել 1908-ը կամ 78%-ը: Քննաշրջանից, 1-ին և 2-րդ վերահանձնումներից և առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումներից հետո համալսարանից հեռացվել է 66 ուսանող.
2. հեռակա ուսուցման բակալավրիատի 1-4-րդ կուրսերի 1655 ուսանող. նրանցից դրական գնահատականներ են ստացել 936-ը կամ 57%-ը: Քննաշրջանից, 1-ին և 2-րդ վերահանձնումներից և առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումներից հետո համալսարանից հեռացվել է 57 ուսանող.
3. առկա ուսուցման մագիստրատուրայի 1-ին կուրսի 312 ուսանող. նրանցից դրական գնահատականներ են ստացել 256-ը կամ 82%-ը: Քննաշրջանից, 1-ին և 2-րդ վերահանձնումներից և առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումներից հետո համալսարանից հեռացվել է 9 ուսանող.
4. հեռակա ուսուցման մագիստրատուրայի 1-2-րդ կուրսերի 78 ուսանող. նրանցից դրական գնահատականներ են ստացել 73-ը կամ 94%-ը: Քննաշրջանից, 1-ին և

2-րդ վերահանձնումներից և առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերի վերահանձնումներից հետո համալսարանից հեռացման ենթակա ուսանողներ չեն եղել:

Առկա ուսուցման բակալավրիատում ուսման առաջադիմությունը կազմել է 78%: Այն նվազել է վերջին 3 տարիների նույն քննաշրջանի ցուցանիշի համեմատությամբ (2020-2021՝ 83,5%, 2019-2020՝ 84,7%, 2018-2019՝ 86,9%), ինչը հիմնականում պայմանավորվել է 2020 թվականից ակտիվության գնահատման մեխանիզմների փոփոխությամբ և գործընթացի նկատմամբ սահմանված հավելյալ վերահսկողությամբ: Առկա ուսուցման մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը կազմել է 82% (առաջին կիսամյակում՝ 87,6%), հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 57% (առաջին կիսամյակում՝ 59,2%) և հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 94% (առաջին կիսամյակում՝ 88,2%): Նախորդ տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի համեմատությամբ ուսման առաջադիմությունը առկա ուսուցման բակալավրիատում նվազել է 2,4%-ով, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 5,6%-ով, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 2,2%-ով, իսկ հեռակա ուսուցման մագիստրատուրայում բարելավվել է 5,8%-ով: Առկա ուսուցման համակարգում ուսման առաջադիմության ցուցանիշն ըստ ուսումնառության տևողության կայուն միտում չունի:

Առկա ուսուցման բակալավրիատի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերում ուսման առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է 75%, 82% և 78%: Առկա կրթաձևում ուսանողների շուրջ կեսն ունի «բավարար» գնահատական 3 տարիների ընթացքում, սակայն «գերազանց» գնահատական ունեցողների տեսակարար կշիռն ըստ ուսումնառության տևողության աճի միտում ունի. որքան երկարում է ուսումնառությունը, այնքան «գերազանց» գնահատական ունեցող ուսանողների տեսակարար կշիռն ավելի բարձր է (համապատասխանաբար՝ 5%, 9%, 13%): «Լավ» գնահատական ունեցող ուսանողների տեսակարար կշիռը կայուն միտում չունի (համապատասխանաբար՝ 17%, 23%, 19%): Հեռակա ուսուցման բակալավրիատի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կուրսերում ուսման առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է՝ 50%, 65%, 53% և 58%: Հեռակա կրթաձևում «գերազանց» և «լավ» գնահատականներ ունեցողների տեսակարար կշիռն ըստ ուսումնառության տևողության ևս հիմնականում աճի միտում ունի (համապատասխանաբար՝ 1%, 4%, 8%, 7% և 5%, 6%, 6%, 10%): Բակալավրիատում, ըստ առանձին կրթական ծրագրերի, ֆինանսական, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետներում ուսման առաջադիմությունը զգալի բարձր է համալսարանի ուսանողների միջին առաջադիմության ցուցանիշից, հաշվապահական հաշվառման և աուդիտի, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետներում զգալի ցածր է միջինից, իսկ մնացած ֆակուլտետներում այն մոտ է միջինին: Մագիստրատուրայում, ըստ առանձին կրթական ծրագրերի, ֆինանսական, հաշվապահական հաշվառման և աուդիտի, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետներում ուսման առաջադիմությունը զգալի բարձր է համալսարանի ուսանողների միջին առաջադիմության ցուցանիշից, տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների

ֆակուլտետում՝ զգալի ցածր է միջինից, իսկ մնացած ֆակուլտետներում այն մոտ է միջինին: Կույր գնահատման սկզբունքով գիտելիքի ստուգման և բանավոր քննությունների արդյունքները ամփոփիչ քննությունների փուլում գրեթե միանման են, սակայն վերահանձնումների փուլում բանավոր քննությունների արդյունքները զգալի տարբերվում են համակարգչային քննությունների արդյունքներից:

Արձանագրելով կատարված աշխատանքները՝ գիտական խորհուրդը, միաժամանակ, նշում է, որ դեռևս կան թերություններ և չլուծված խնդիրներ.

1. Թեպետ ուսանողների ակտիվության գնահատումը հետզհետե ավելի արժանահավատ է դարձել և մոտեցել է համակարգչային քննություններից ուսանողների ապահոված արդյունքներին, սակայն գնահատման անաչառությունը դեռևս շարունակում է մնալ ոչ բավարար:
2. Թեպետ բանավոր և համակարգչային քննությունների արդյունքները ամփոփիչ քննության փուլում միմյանց էապես մոտեցել են առկա ուսուցման բակալավրիատում, սակայն վերահանձնումների փուլում դրանք էապես շեղված են և շարունակում են մնալ ոչ բավարար մակարդակի վրա: Հեռացումների 95 և ավելի տոկոսը պայմանավորված է ուսանողների համակարգչային քննությունը չհաղթահարելու հանգամանքով:
3. Ամբիոններն իրենց սպասարկած մասնագիտական կրթական ծրագրերի ուսանողներին ավելի բարձր են գնահատում, քան դրանք չսպասարկող ամբիոնները:
4. Միջին առաջադիմության ցուցանիշից, ըստ տարբեր ֆակուլտետների և կրթական ծրագրերի, առկա են էական շեղումներ:
5. Ուսանողների ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության կազմակերպման կարգերի ներդրումից հետո հեռակա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերի միջին առաջադիմության ցուցանիշը շարունակում է մնալ մտահոգիչ ցածր:
6. «Լավ» գնահատականով քննաշրջանն ամփոփող ուսանողների տեսակարար կշիռը շարունակում է մնալ մտահոգիչ ցածր մակարդակի վրա:
7. Ուսանողական հարցումների արդյունքները և ուսանողների կողմից իրենց դասավանդողների մատնանշումները փաստում են, որ չնայած դասախոսների կողմից միմյանց փոխարեն դասընթաց վարելու դեպքերը շեշտակի նվազել են, սակայն դեռևս առկա են առանց դեկանատների իմացության իրականացվող նման դեպքեր:
8. Ուսանողական հարցումների արդյունքները փաստում են, որ թեպետ արդիական գրականությամբ ապահովվածության խնդիրը հիմնականում լուծվել է, սակայն դեռևս առկա են հայալեզու գրականության և նյութերի տրամադրման խնդիրներ:
9. Թերություններ կան դասախոսների կողմից ուսանողների հաճախումների, ակտիվության գնահատման և էլեկտրոնային մատյաններում ամփոփման աշխատանքներում:

Ելնելով վերոգրյալից՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հանձնարարել ռեկտորատին՝**
   1) արձանագրված թերությունների վերացման համար մշակել որոշակի միջոցառումներ՝ նշելով պատասխանատուներին,
   2) ամբողջացնել ուսումնական գործընթացի կազմակերպման և վարչարարության իրականացման կարգավորումների համակարգը՝ ապահովելով դրանց ներդաշնակությունը առկա և հեռակա կրթաձևերում,
   3) ներդնել դասախոսների կողմից իրենց ուսումնական բեռնվածությամբ և պաշտոնի անձնագրով նախատեսված աշխատանքների մշտադիտարկման և չկատարման դեպքում աշխատանքի վարձատրության վերահաշվարկի կառուցակարգեր:

2. **Հանձնարարել դեկաններին՝**
   1) ֆակուլտետների գիտականք խորհուրդների նիստերում քննարկել ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշումները, հետևողական լինել դրանք ժամանակին կատարելու և արձանագրված թերություններն ու բացթողումները շտկելու հարցերում,
   2) դասախոսների և ուսանողների դասաձախողումների դեպքերը քննարկել ֆակուլտետների գիտական խորհուրդների և ամբիոնների նիստերում՝ անհրաժեշտության դեպքում հարցը դարձնելով նաև ռեկտորատի քննարկման առարկա,
   3) գնահատականների, վերահանձնումների, հեռացումների միջին վիճակագրական ցուցանիշներից շեղում ունեցող գնահատականները դարձնել ֆակուլտետների գիտական խորհուրդների քննարկման առարկա՝ վերհանելով պատճառները,
   4) խիստ հսկողություն սահմանել էլեկտրոնային մատյանների լրացման նկատմամբ,
   5) երկու ամիսը մեկ պարբերությամբ իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի ակադեմիական խմբերի ակտիվության գնահատականների մշտադիտարկում,
   6) ուժեղացնել ֆակուլտետի վերահսկողությունը հատկապես ակտիվության բաղադրիչի գնահատման և բանավոր քննությունների վերահանձնումների նկատմամբ:

3. **Հանձնարարել ամբիոնի վարիչներին՝**
   1) պարբերաբար իրականացնել դասալսումներ և խիստ մշտադիտարկում իրականացնել ամբիոնների դասախոսների, հատկապես միջին ցուցանիշից էապես շեղված գնահատման քաղաքականություն ունեցող դասախոսների գնահատման պրակտիկայի նկատմամբ,

2) խիստ վերահսկողություն սահմանել Moodle հարթակ վերբեռնվող նյութերի բովանդակության նկատմամբ,
3) իրականացնել ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրենց պաշտոնների անձնագրերով սահմանված գործառույթների և պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման մշտադիտարկումներ՝ արդյունքները քննարկելով ամբիոնի նիստերի ընթացքում:

4. **Սույն որոշումը քննարկել ամբիոնների և ֆակուլտետների գիտական խորհուրդների նիստերում, մշակել միջոցառումներ ուսումնական գործընթացը բարելավելու ուղղությամբ:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

2022 թ. հոկտեմբերի 13
Երևան